

Կ-1002²-06.05.2016-SՀ-010/2**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՔԸ****ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 15-րդ հոդվածի 1-ին մասից հանել «և մաքսանենգության» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 170³ հոդվածի վերնագիրը և 1-ին պարբերությունը «Հարկերը» բառից հետո լրացնել «տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 170⁷-րդ, 170⁸-րդ, և 170¹²-րդ հոդվածների վերնագրերում և հոդվածների ամբողջ տեքստում «դրոշմանիշերի և (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների)» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:

Հոդված 4. Օրենսգրքի 170⁹-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 170⁹ Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնները խախտելը

Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց դրանց վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցման կատարման կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) էլեկտրոնային գրանցում կատարված դրոշմապիտակներով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու

դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 204¹-ին հոդվածով.

«Հոդված 204¹. Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները

Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելն այն անձի կողմից, ում այդ գույքը վստահված է եղել, ինչպես նաև վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով (ավանդներով) բանկային գործառնություններ իրականացնելը՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 234-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները քննում են սույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 3-րդ մասով, 137¹-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 150³-րդ, 201²-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների դեպքում մաքսային հսկողության գոտում հայտնաբերված իրավախախտումների մասով, 169²-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային մարմին ներկայացվող վիճակագրական տեղեկատվության մասով, 170³-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մաքսային իրավահարաբերությունների մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 189-204-րդ հոդվածներով նախատեսված մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործերը:

Մաքսային մարմինների անունից այդ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն մաքսային մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վերադաս մաքսային մարմնի համապատասխան իրավասություն ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:»:

Հոդված 7. Օրենսգրքի 244² հոդվածից հանել առաջինը նշված «165,» թիվը:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 244¹⁶-րդ հոդվածով.

«Հոդված 244¹⁶. Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունների վերաբերյալ գործերի քննությունը

Սույն օրենսգրքի 204¹-ին հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր նշանակում է համապատասխան արգելանք կամ կալանք կիրառած պետական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 263-րդ հոդվածի վերջին պարբերության «ԽՍՀՄ մաքսային օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

Հոդված 10. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենսգրքի 283-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «և մաքսանենգության վերաբերյալ» բառերը:

Հոդված 12. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բռնագրավելու մասին որոշումներն ի կատար են ածվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթացմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացնել «, հայտարարագրեր» բառով:	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացվել է «, հայտարարագրեր» բառով:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինել «ազգային անվտանգության» բառերով:	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինվել են «ազգային անվտանգության» բառերով: